# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 01

### Գանձակ համայնքի ավագանու 2020թ. հունվարի 14-ի թիվ 1 նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի ավագանու 2020թ. հունվարի 14-ի թիվ 1 նիստի հետևյալ օրակարգը.

1/Գանձակ համայնքի ավագանու 2020թ. հունվարի 14-ի թիվ 1 նիստի օրակարգը հաստատելու մասին

2/Գանձակ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին

3/ Գանձակ գյուղական համայնքի 2020թ. տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը սահմանելու մասին

4/ Գանձակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

5/ Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող 17հա պահուստի վարելահողերի վարձավճարի չափի հաստատման մասին

6/ Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող 600հա արոտավայրերի վարձավճարի չափի հաստատման մասին

7/ Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը աճուրդ վաճառքով օտարելու և մրցույթով վարձակալության տրամադրելու, ինչպես նաև բնակավայրի կատեգորիայի հողատեսքերը աճուրդ վաճառքով օտարելու և դրանց մեկնարկային գները սահմանելու մասին

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 02

Գանձակ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությու
մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի 2019թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

1/ Ըստ եկամտատեսակների.

ա. հողի հարկ 9000.0 կատարվել է 8729.1 հազ. դրամ 97.0 %

բ. շենք շինության հարկ 590.0-651.2 հազ. դրամ 110.4%

գ. փոխադրամիջոցներից հարկ 11534.0-11445.4 հազ. դրամ 99.2%

դ. տեղական տուրք 194.0-90.0 հազ. դրամ 46.4%

ե. հողի վարձավճար 770.0-431.0 հազ. դրամ 56.0%

զ. վարչական տուգանք և տեղական վճար 10.0

է. վարձավճար 8040.0-8318.7 հազ. դրամ 103.5%

2/ ընդամենը սեփական եկամուտներ 30138.0-29665.4 հազ. դրամ 99.0%

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
# ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 03

Գանձակ գյուղական համայնքի 2020թ.տեղական տուրքերի և վարձավճարների
դրույքաչափերը սահմանելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18
կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների
ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքի 2020 թվականի տեղակ
տուրքերի և վարձավճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատս
ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի տարածքում ն
շենքերի, շինություններիև ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրմ
/բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվ
շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, ս
թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մե
մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինություննե
համար՝ 15000 դրամ.

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 04

### Գանձակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կ դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. <<Գանձակ գյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայությունների հա յուրաքանչյուր երեխայի համար ծնողական միջոցների դրույքաչափը սահմանել երեք /3000/ հա դրամ, <<Գանձակի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի մեկ աշակերտի ուսման վարձավճ դրույքաչափը երեք /3000/ հազար դրամ:

2. Աղբահանությունը համայնքում կատարել հետևյալ դրույքաչափերով.

1/ Ֆիզիկական անձանցից՝ մեկ շնչին -100 դրամ

2/ կրթական, մշակութային, առողջապահական հաստատություններին՝ 1քմ-3 դրամ

3/ առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններին 1քմ-50 դրամ

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

7/20/2020

X

**Համայնքի ղեկավար** **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
# ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 05

### Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող 17հա պահուստի վարելահողերի վարձավճարի չափի հաստատման մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20 կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի վարչական սահմաններում գտնվող 17հա վարելահող 2020թ. վարձավճարի գումարը՝ 170.0 հազ. դրամ:

2.001 հա վարելահողի վարձավճարի չափը հաստատել 100 դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

7/20/2020

**Համայնքի ղեկավար** ____________ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
# ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 06

Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող 600հա արոտավայրերի
վարձավճարի չափի հաստատման մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20
րդ կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի վարչական սահմաններում գտնվող 600հա արոտավայր
2020թ. վարձավճարի գումարը՝ 450.0 հազ. դրամ:

2. Մեկ գլուխ խոշոր եղջրավոր անասունի արոտի վարձավճարի չափը հաստատել 750 դրա

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

X

**Համայնքի ղեկավար** **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 07

Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր աճուրդ վաճառքով օտարելու և մրցույթով վարձակալության տրամադրելու, ինչպ նաև բնակավայրի կատեգորիայի հողատեսքերը աճուրդ վաճառքով օտարելու և դրանց մեկնարկային գները սահմանելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-ր կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Տալ համաձայնություն, համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքա սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը օտա աճուրդ վաճառքով և մրցույթով տրամադրել վարձակալության, ինչպես նաև աճո վաճառքով օտարել բնակավայրի կատեգորիայի հողատեսքերը և սահմանել տս հողատեսքերի վարձակալության և աճուրդ վաճառքների մեկնարկային գները՝

1/արոտավայր 1450.68հա 1հա-ի մեկնարկային գինը 2000 դրամ-/վարձակալություն/

2/ վարելահող 3-րդ կարգ 13.03հա 1քմ-ի մեկնարկային գինը 10 դրամ-/վարձակալություն/

3/ վարելահող 3-րդ կարգ 2.0հա 1քմ-ի մեկնարկային գինը 60 դրամ-/աճուրդ/

4/ վարելահող 4-րդ կարգ 7.826հա 1քմ-ի մեկնարկային գինը 10 դրամ-/վարձակալություն/

5/ վարելահող 5-րդ կարգ 7.734հա 1քմ-ի մեկնարկային գինը 10 դրամ-/վարձակալություն/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 08

### Գանձակ համայնքի ղեկավարի 2020թ. աշխատավարձի դրույքաչափը սահմանե մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11 կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Գանձակ համայնքի ղեկավարի 2020թ. աշխատավարձի դրույքաչափը սահմանել 365 /երեք հարյուր վաթսուն հինգ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

7/20/2020

**Համայնքի ղեկավար** X **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
# ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 09

Գանձակի համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների
աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափ
հաստատելու մասին

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի և <<Տեղա
ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1.Հաստատել Գանձակ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքապետար
աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների 2020թ. թվաքանակը - 50

2.Հաստատել Գանձակ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքապետար
աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների 2020թ. հաստիքացուցակը
պաշտոնային դրույքաչափերը.

| h/h | պաշտոնը | պաշտոնի անվանումը ըստ ՀԾ օրենքի | հաստ. միավորը | դրույքաչափը | Բարձր լեռնային 20% | ընդա |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի ղեկավար | | 1 | 365.1 | 8.0 | 373.1 |
| 2. | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 283.9 | 8.0 | 291.9 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
# ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 10

### Գանձակ համայնքի 2020թ. բյուջեի հաստատման մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կե դրույթներով և համաձայն << ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի 2020թ-ի բյուջեն.

1/ եկամուտների գծով՝ 147597.6 հազ. դրամ

2/ ծախսերի գծով՝ 148070.6 հազ. դրամ

3/ դեֆիցիտը՝ 473.0 հազ. դրամ

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձ հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատվ 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձ հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտը՝ համաձայն հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգմ համաձայն հատված 6-ի:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 11

### Գանձակի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների տարեվերջյ
### գույքագրման արդյունքները հաստատելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29
կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունն
տարեվերջյան գույքագրման արդյունքները:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

7/10/2020

X

**Համայնքի ղեկավար** **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 12

### Գանձակ գյուղի թվով 5 բնակիչների դիմումները նրանց ֆինանսական օգնությո ցույց տալու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվ դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Նկատի ունենալով, որ Գանձակ համայնքի նշված բնակիչների տնտեսությունները գտնվ են սոցիալապես վատ պայմաններում, ուստի հարգել նրանց խնդրանքը և Վիկ Սարգսյանին տրամադրել 40000 դրամ, Տոլիկ Սարգսյանին՝ 50000 դրամ, Իրի Բաղդասարյանին՝ 50000 դրամ, Նունե Արզումանյանին՝ 30000 դրամ, Գայանե Ոսկանյան 30000 դրամ օգնություն, ընդամենը 200000 դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | | |
|---|---|---|
| Կողմ -7 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |

7/20/2020

X

**Համայնքի ղեկավար** **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 13

### Գանձակ համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվ
դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Գանձակ համայ
տարեկան աշխատանքային պլանը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

7/20/2020

**Համայնքի ղեկավար** X ________________ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 14

### <<ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ Խ. ԱԲՈՎՅԱՆ ԵՎ Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ>> /ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ/ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀօրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2020թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

համայնքի ավագանին որոշեց.

1.Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու<<Գանձակ համայնքի ներհամայնքային Խ. Աբովյան և Ս. Կապուտիկյան փողոցների ասֆալտապատում>> /երկրորդ փուլ/ տնտեսական զարգացման ծրագիրը:

2.Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել <<Գանձակ համայնքի ներհամայնքային Խ. Աբովյան և Ս. Կապուտիկյան փողոցների ասֆալտապատում>> /երկրորդ փուլ/ տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:

3.Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2020 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

4.Սույն որոշումն ուժի մեջ է՝ 14.01.2020թ-ից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

7/20/2020

X

**Համայնքի ղեկավար** **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ Բաղրամյան, 4

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 15

### <<ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀօրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2020թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

համայնքի ավագանին որոշեց.

1.Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու<<Գանձակ համայնքի կենտրոնական հրապարակի բարեկարգում>> տնտեսական զարգացման ծրագիրը:

2.Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել <<Գանձակ համայնքի կենտրոնական հրապարակի բարեկարգում>> տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:

3.Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2020 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

4.Սույն որոշումն ուժի մեջ է՝ 14.01.2020թ-ից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

7/20/2020

**Համայնքի ղեկավար** ✕ ____________________ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**